ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՈՒՄ ԳԵՂԱՐՔՈՒՆՅԱՑ ԹԵՄԻ ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆ ԳՅՈՒՂՈՒՄ

Սույն թվականի դեկտեմբերի 21-ին Գեղարքունյաց թեմի Ներքին Գետաշեն համայնքում տեղի ունեցավ թեմի ևս մեկ հավատո օջախի օրհնություն:

Ձեռամբ Տ. Մարկոս եպս. Հովհաննիսյանի և մասնակցությամբ թեմի հոգևոր դասի օծվեցին հիմնովին նորոգված Սուրբ Ստեփաննոս մատռան Սուրբ Սեղանը և Ավազանը: Մատուռի նորոգության ամբողջ աշխատանքը ստանձնել էին նույն համայնքի հավատավոր Ավեյան ընտանիքի զավակները: Մատուռը գտնվում է պատմական Կոթ քաղաքի տարածքում, որը ժամանակին եղել է Գեղարքունիքի իշխանի նստավայրը: Կոթ ավանը հնում կարևոր հանգույց էր Արարատյան դաշտից դեպի Արցախ և Պարտավ տանող ճանապարհներին: 19-րդ դարավերջի հեղինակները գյուղի շրջակայքում հիշատակում են 7 եկեղեցիների ավերակներ, որոնցից ամենամեծն ու նշանավորը Ս. Աստվածածինն է (կամ Կոթավանք):

Օծման հանդիսավոր արարողությունից հետո գյուղապետարանի և բարերարների նախաձեռնությամբ կատարվեց տոնախմբություն, որը ուղեկցվեց ազգային-ժողովրդական երգ ու պարով:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ